

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

Ա.

ՔԱՂԱՌԱՆՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՂ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնը

Կոնդակ յանուն Վիճ. Կոնսիատ. Երևանայ, ընդ որում յետս դարձուցանելով զերկուս գործս նորին, որ վասն պսակալութեան վիճակայնոցն Տաթևու՝ Մեսրոպայ Յարութիւնեանց և Մովսիսի Պետրոսեանց, հաստատէ զվճրաՍինօդին՝ սակս անլուծանելի գոլոյ պսակայ նոցին:

— Յանուն Մեսրոպ վարդապետի Մագսուտեան և անդամոց առաջնորդական խորհրդարանին, որով պատուիրեցաւ ի սկզբան առաջիկայ Ապրիլ ամսոյ կատարել առաջնորդական ընտրութիւն համաձայն հաստատեալ կանոնադրութեան և առաջարկել ի հաստատութիւն: Մարտի 5 № 193.

— Յանուն Տ. Եղիշէ ծ. վարդապետի Մուրադեան, որով կարգեցաւ պատասխանատու խմբագիր «Արարատ» ամսագրոյ: № 196.

— Յանուն Տ. Մամբրէ վարդապետի, որով կարգեցաւ տեսուչ տպարանի Մայր Աթոսոյ: № 198.

— Յանուն Տ. Ղևնդ Եպիսկոպոսի, որով պատուիրեցաւ ածել յաստիճան սարկաւազութեան զշուշեցի Աւետիսն Տէր Գասպարեան: № 199.

— Յանուն Տ. Տիրայր վարդապետի, որով պատուիրեցաւ նախադահել հոգաբարձական ժողովոց ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի: № 201.

— Յանունն հոգաբարձութեան ներս. ազգ. հոգևոր գպրանոցի, որով տուաւ տեղեկութիւն զյիշեալ կարգադրութենէ: № 202.

— Յանունն վիճ. Կոնսիստորիային վրաստանի և Իմերէթի, որով պատուիրեցաւ կարգադրել, զի ի միում յառաջիկայ տօնից ժողովեսցեն զնուէրս յօգուտ պատերազմին և զգոյացեալ դուժարն մատուցեն տեղական վարչութեան: № 203.

Կոնդակ նոյն Կոնսիստորիային, որով պատուիրեցաւ օգնական կարգել Կարապետ քահանայի Մալխասեանց Բաթում քաղաքի: № 208.

Շրջաբերական կոնդակ յանուն Կոնսիստորիայից ուսասհայոց, որով պատուիրեցաւ տալ տեղեկութիւն զապօրինի կենակցաց ի վիճակս: № 210.

— Յանունն վիճակային Կոնսիստ. վրաստանի և Իմերէթի, որով պատուիրեցաւ վճարել գործարանին Թադսկի զմնացեալ ի գնոց խողովակացն ս. Խաչի Արգեազու զգումարն զ 1800 ռ. յերիս նուագս: № 216.

— Յանունն վիճ. Կոնսիստ. Երևանայ, որով պատուիրեցաւ տալ Մկրտչի Պալեան զկենսաթոշակ զ220 ռ. ի վիճակային արգեանց և զ100 ռ. ի թեմական գպրանոցէն տեղւոյ յիւրաքանչիւր ամի: № 220.

Բ.

Հայրսպետական շնորհակալիք եւ օրհնութիւնք:

Կոնդակ օրհնութեան և գօհունակութեան յանուն շուշեցի Միրզաջանի Պատուականեանց վասն նուիրաբերութեան նորա:

Յանունն Խաչատրոյ Գէորգեան վասն Աստուածահաճոյ գործոց նորա:

կոնդակ օրհնութեան և մխիթարութեան Ստեփաննոսի Գրիգորեան Այվազեանց բազուեցւոյ, վասն նուիրաբերութեան 400 ռուբ. ի յիշատակ հանգուցեալ հօրն:

ՍԻՆՕԳԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՅ

Յունվարի 14-ին Սինօզը լսեց ազգիս Վեհափառ Հայրապետի անցեալ տարուայ Դեկտեմբերի 29-ին տուած № 1421 կոնդակը և օրոշեց ազատ համարել Սինօզի հաւատարմատար պ. Քեալեանցին համաձայն իւր խնդրանաց, վճարել նրան հասանելի ռոճիկն՝ հաշուելով անցեալ տարուայ Յուլիսի մէկից մինչև ներկայ տարուայ Յունվարի վերջը. Վեհափառ Հայրապետի անձնական գործերի և յանձնարարութիւնների համար վարձել ժամանակաւորապէս փաստաբան պ. Գարեգին Ենգիլբարեանցին և կրելիք պայմանագրի մէջ մտցնել նրա տարեկան վարձատրութեան և ճանապարհածախսի չափը:

Սինօզն իւր՝ անցեալ տարուայ Նոյեմբերի 5-ին կայացրած օրագրով օրոշել էր լուծել տիկին Շուշանիկ Նուրալեանի ամուսնութիւնն և իրաւունք էր տուել նորից ամուսնանալու: Յունվարի 23-ին լսեց այս առթիւ պ. Պրօկտորի տուած բողոքն ու օրոշեց հրամայել՝ ի կատարածել իւր նախկին վճիռն և անհետեանք թողեց յիշեալ բողոքը:

Յունվարի 26. Սինօզը օրոշեց անհետեանք թողնել Գօրի քաղաքի ծխատէր հանգուցեալ տէր Գրիգոր քահանայ Փանեանցի այրու խնդիրն, որով Գէորգ քահանայ Մեհրաբեանից պահանջում էր 70 ռուբլի՝ իբրև իրեն հասանելի բաժնի մնացորդ՝ իւր հանգուցեալ ամուսնու եկամուտներից:

Նոյն թուին օրոշեց մերժել Երևանի կոնսիստորիայի միջնորդութիւնը Ղարամահադ գիւղի վրայ Ոսկան տէր-Պետրոսեանցին քահանայ ձեռնադրելու մասին:

Նոյն թուին, Սինօզը լսելով տէր կառավարչապետի